

ԺԱՄԱՆՈՒՄ ՓԱՐԻԶ

Մայիսի 8-ին, ուրբաթ օրը, կեսօրից հետո, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ գավազանակիր Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանի, Ֆրանկֆուրտից մեկնում է Փարիզ:

«Ֆրանկֆուրտ Մայն» օդակայանում Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու էին եկել Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը. Տ. Արիս եպս. Շիրվանյանը, Տ. Հակոբ վրդ. Գրլլենճյանը, Հեսենի նահանգի համայնքային վարչության անդամները և ազգային այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Մեկ ժամ թռիչքից հետո Վեհափառ Հայրապետի օդանավը վայրէջք է կատարում Փարիզի «Օռլի» օդակայանում, որտեղ Նրան դիմավորելու էին եկել Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, պատվիրակի Փարիզի փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նազգաշյանը, Տ. Ներսեհ ծ. վրդ. Բափուճյանը, Տ. Մյուռոն աբդ. Գրվրգյանը, Տ. Առաքել աբդ. Գալայճյանը, քահանայից դասը, Փարիզի կրոնական ընկերակցության ներկայացուցչական և վարչական ժողովների ու Մայր եկեղեցու հոգաբարձության անդամները, ազգային զանազան մարմինների և բարեսիրական կազմակերպությունների ներկայացուցիչները, հայկական թերթերի թղթակիցները և ուրիշներ:

Հայոց Հայրապետին ողջունելու էր եկել նաև, հանուն Ֆրանսիայի կառավարության, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության պրոտոկոլի պատասխանատու պրն. Լոմոնիեն:

Ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո Վեհափառ Հայրապետը առաջնորդվում է Փարիզի «Ինտեր-Կոնտինենտալ» հյուրանոց:

Նույն օրը Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաբարյանը Ֆրանկֆուրտից վերադառնում է Մոսկվա, այնտեղից էլ՝ Լենինական, իր պաշտոնատեղին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ
75-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՓԱՐԻԶՈՒՄ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ԼՈՆԴՈՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻՆ

Նույն օրը, ժամը 18-ին, հյուրանոցի Իր հարկաբաժնում Վեհափառ Հայրապետը ընդունում է Լոնդոնի՝ Հայոց Հայրապետի գահակալության 25-ամյակի հուշամեդալների հանձնախմբին՝ գլխավորությամբ պատվո նախագահ, Անգլիայի հայրապետական պատվիրակ Տ. Ներսես եպս. Պոզապալյանի:

Հանձնախումբը «Ինտեր-Կոնտինենտալ» հյուրանոցի ճաշասրահում կազմակերպում է ընդունելություն՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ընդունելությանը ներկա են լինում նաև Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքճյանները:

Ընդունելության ժամանակ Վեհափառ Հայրապետին ողջունում են հանձնախմբի պատվո նախագահ Տ. Ներսես եպս. Պոզապալյանը և ատենապետ Գևորգ Քյուրքճյանը:

Այս առթիվ օրհնության խոսք է ասում Վեհափառ Հայրապետը՝ բարձրորեն գնահատելով հանձնախմբի կատարած աշխատանքը և «Ս. Ներսես Շնորհալի» շքանշանով պարգևատրում հանձնախմբի հետևյալ լոնդոնաբնակ անդամներին:

ա) Գևորգ Քյուրքճյան (ատենապետ),
բ) Կարո Գրիգորյան (փոխատենապետ),
գ) Գրիգոր Կյուլպենկյան (գանձապահ),
դ) Բարսեղ Պոնջելյան (քարտուղար),
ե) Ասատուր Կյուզելյան (քարտուղար),
զ) Ստեփան Զարդարյան (խորհրդական):

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄՅԱ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 9-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 20.30-ին, «Ինտեր-Կոնտինենտալ» հյուրանոցի մեծ սրահում, բարձր հովանավորությամբ Նորին Սրբություն Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի և ներկայությամբ Հ. Բ. Ը. Միության ցկյանս նախագահ մեծարգո տիար Ալեք Մանուկյանի, տեղի է ունենում Հ. Բ. Ը. Միության հիմնադրման 75-ամյակին նվիրված հանդիսություն:

Հանդիսությանը ներկա են լինում սփյուռքահայ գրեթե բոլոր գաղթօջախների Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղերի պատվիրակությունները, բազմաթիվ մտավորականներ և ազգային գործիչներ Ֆրանսիայից և այլ երկրներից:

Հանդիսության ժամանակ զեկուցումով առաջինը հանդես է գալիս Հ. Բ. Ը. Միության մեծահարգ նախագահ տիար Ալեք Մանուկյանը: Հարգարժան նախագահը իր զեկուցման մեջ հանգամանորեն ներկայացնում է Միության 75-ամյա արդյունավետ գործունեությունը՝ վեր հանելով Միության հիմնադիր Պողոս Նուպար Փաշայի մեծ անձնավորությունը և նրա հաջորդների նույնքան ազգանվեր նվիրումն ու իրագործումները:

Հանդիսության ընթացքում ելույթ է ունենում նաև Հ. Բ. Ը. Միության Ֆրանսիայի մասնաճյուղի նախագահի տեղակալ պրն. Էդվարդ Ադամյանը:

Ընդհանուր ոգևորության մթնոլորտում օրհնության հետևյալ խոսքով հանդես է գալիս Վեհափառ Հայրապետը.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

(9 մայիսի 1981 թ., Փարիզ)

Կանցնին տարիներ ու տասնամյակներ, կու գան ու կերթան սերունդներ, և ահա արդեն երեք քառորդ դար, բայց հայ ազգի ծոցին մեջ միշտ նույն գաղափարականով և մշտանորոգ իրագործումներով կգոյատևե կազմակերպություն մը, միակը, որ կա ու կանգուն պիտի մնա տևապես, ինչքան ատեն այս արևին տակ պիտի ապրի մեր ժողովուրդը, ինչքան ժամանակ հայ սիրտ մը պիտի բարախե այս աշխարհի վրա:

Այդ կազմակերպությունը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունն է:

Այսօր, կանգնած հայկական այս մեծ Միության յոթանասունհինգամյակի սեմին, հարց պետք է տանք, թե ո՞րն է գաղտնիքը այս ճշմարտության, որո՞նք են հիմքերը այս երևույթին:

Պատասխանելով այս հարցին, նախ պետք է հաստատենք թե Հ. Բ. Ը. Միությունը ի սկզբանե իր գոյության իմաստը, իր առաքելությունը խարբսխած է մարդկային ամենաազնիվ զգացումներուն՝ քրիստոնեական գութի, բարի գործի և եղբայրսիրության վրա: Զգացումներ, որոնք կհատկանշեն, կմարմնավորեն մարդկային կյանքը ըմբռնելու և ապրելու բարոյական գաղափարականը:

Երկրորդ՝ Հ. Բ. Ը. Միությունը՝ քրիստոնեական-բարոյական իր այս առաքելությունը ուխտած է ծավալել ու տարածել համայն հայության կյանքի հորիզոնին վրա և եղբայրական օգնության ձեռք երկարել բոլորին, հայ ազգի բոլոր զավակներուն անխտիր: Հ. Բ. Ը. Միությունը հատվածական չէ, սահմանափակ չէ, կողմնակցական չէ: Ան ճշմարտապես հայկական է, ճշմարտապես բարեգործական է և ճշմարտապես ընդհանուր մեր ազգին կծառայե, համազգային է: Այսպես է որ իր երեքքառորդդարյան գործունեության ընթացքին Հ. Բ. Ը. Միությունը իր բարերար ու շինարար նպաստը առատորեն ընծայած է մեր ժողովուրդին, տագնապալի ժամանակներուն մանավանդ: Վերջին 75 տարիներու ընթացքին չեք գտներ հայ կյանքի մեջ տագնապալի մեկ շրջան, չեք գտներ ազգանվեր ու հայրենաշեն մեկ կարևոր ձեռնարկ, ուր ներկա չըլլա Հ. Բ. Ը Միությունը, օգնություն և բարիք բաշխող իր ձեռքերով, սկսյալ Մայր Հայաստանեն մինչև հայ սփյուռքի ամենահեռավոր ափերը:

Բարեգործական այս մեծ Միությունը հատկանշող լուսավոր նկարագիրն է նաև՝ անոր ոգեկան միասնությունը, գաղափարակցությունը և սերտ գործակցությունը Հայաստանյայց Առաքելական Եկեղեցվո հետ: Բարեգործականի մարդիկ, ի սկզբանե և մինչև այսօր եղած են հայ քրիստոնյա հոգիներ և հավատարիմ զավակները հայոց Մայր Եկեղեցվո: Այս կնշանակե թե Հ. Բ. Ը. Միության երջանկահիշատակ հիմնադիրները և անոր հետագա ղեկավարները գիտցած են իրենց կյանքի ու գործունեության լաստը ամրացնել մեր ազգի հոգեկան ամենախոր, ամենամուր ու ամենաանսասանելի վեմին վրա, որ Հայ Առաքելական Եկեղեցին է, ահա մոտ երկու հազար տարիներե ի վեր: Եվ պատահական չէ որ Բարեգործականը իր գոյատման առաջին օրերեն մինչև մեր օրերը տևապես վայելած է գնահատանքը, խրախուսանքը և օրհնությունը Հայոց Հայրապետներուն:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ
Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹՅԱՆ 75-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ. ՓԱՐԻԶ, ՄԱՅԻՍԻ 9

Եկեղեցին հայկական, բարձր բերդը հավատքին մեր պապերուն, իր պատմական սուրբ առաքելության ճանապարհին, Հ. Բ. Ը. Միությունը կճանչնա իբրև իր ամենահարազատ ու իր ամենահավատարիմ բարի գործակիցը: Ահավասիկ երրորդ հիմնական նկարագիրը Հ. Բ. Ը. Միության:

Այսպես ահա կներկայանա մեզի, այսօրվաններուս, Հ. Բ. Ը. Միությունը իր յոթանասունհինգ տարիներու կյանքով ու վաստակով:

Տարիներու և իրադարձություններու հոլովույթով կփոխվին, այո՛, մեր ժողովուրդի կյանքի պայմանները, կփոխվին ազգային կարիքները, կփոխվին ապագայի հեռանկարները, սակայն այս մեծ Միության գործելու հիմնական նպատակներն ու ոգին կմնան անփոփոխ, անշփոթ և հստակ:

Մեր օրերուն Հ. Բ. Ը. Միությունը, միշտ հավատարիմ իր ավանդներուն, նվիրված է մեր ազգին ամենաայժմեական, ամենահրամայական գործին, որն է անոր զավակներուն մեկ ու ամբողջ ու անբաժան պահպանումը սփյուռքի տարածքի վրա իբրև հայ եկեղեցական և մշակութային համայնքներ:

Զորացնել Հայաստանյայց Եկեղեցին, հետզհետե ամուր հիմքերու վրա կազմակերպել հայ եկեղեցական համայնքները արտասահմանի հայության մեջ, ավելի ու ավելի բյուրեղացնել քրիստոնեական առաքինությունները մեր ազգի զավակներուն անհատական և հավաքական կյանքին մեջ, մեր պանդուխտ ժողովուրդի գիտակցության մեջ վառ պահել լույսերը հայ մշակույթի հին ու նոր արժեքներուն, զարկ տալ մանավանդ հայ կրթական գործին ի խնդիր պահպանման մեր մայրենի լեզվին և մեծ կարևորություն ընծայել երիտասարդության հայեցի դաստիարակության, ահա Մեր կարծիքով այն հրամայականները, որոնք կծառանան այսօր բոլորիս առջև, հայ ժողովուրդի պատմության ներկա բախտորոշ ժամանակաշրջանին: Ահավասիկ, հետևաբար, հրամայականները, որ կդրվին նաև Հ. Բ. Ը. Միության գործունեության ճամբուն այսօր:

Մեր հրավերն է և Մեր հորդորը, որ Նեղոսի ափերուն 1906-ին ծնած ու մեր ազգի գոյատևման նվիրված այս մեծ Միությունը, հարատև մշտանորոգ ճիգերով լծվի սփյուռքի ճամբաներուն վրա տարուբերվող հայոց նոր սերունդներու ինքնության պահպանության գործին, ամուր կառչած մեր հավատքին և մեր մայրենի լեզվին:

Վերջերս Երևանի Մեր ծանոթ պատմաբաններեն մին կըսեր՝ «Հայ ազգություն մինուս հայերեն լեզու, հավասար է ոչ հայ ազգության»:

Հ. Բ. Ը. Միության նշանաբանը թող ըլլա լուսապայծառ Խաչատուր Աբովյանի պատգամը՝ «Ազգը պահողը հավատն է և լեզուն»: Հ. Բ. Ը. Միությունը այսօր իր գոյության հիմնական նպատակը թող հոչակե ամենօրյա հայկական դպրոցներու հիմնադրումը և կազմակերպումը սփյուռքի ամբողջ տարածքի վրա:

Մեր օրերուն, սփյուռքի հայության համար չկա ավելի այժմեական, ավելի հրամայական առաջադրանք: Դպրոցաշեն գործի իրականացումը մեծագույն ընծան պիտի ըլլա՝ պարգևված վերածնած մեր մայր հայրենիքին, ձեր հայաստանցի քույրերուն ու եղբայրներուն: Նաև Սուրբ Էջմիածինը և Հայոց Հայրապետը այս կսպասեն ձեզմե:

Այսպիսով, Հ. Բ. Ը. Միությունը՝ է՛, եղած է միշտ և հետզհետե առավել չափով պիտի դառնա արտասահմանի հայության ինքնահաստատման ու ինքնապահպանման ամենահզոր դրսևորումներեն մին:

Հայեր բոլոր երկիրներեն, միացեք, ձեռք-ձեռքի տվեք Հ. Բ. Ը. Միու-

թյան հովանիին տակ և միշտ ոգեշնչված բարի գործի քրիստոնեական գաղափարականով, պայծառ պահեցեք սփյուռքի հայության ինքնապահպանման առաքելության գիտակցությունը:

Մենք կհավատանք Հ. Բ. Ը. Միության քրիստոնեական բարոյական գաղափարականին, Մենք կհավատանք անոր հավատարմության մեր Մայր Եկեղեցիին հանդեպ, Մենք կհավատանք անոր հայապահպանման առաքելության:

Մեր այս հավատքը, մեր օրերուն առավել հաստատուն է և անայլայլ, որովհետև համազգային այս մեծ կազմակերպության գլուխը կանգնած է հավատավոր քրիստոնյա, հայ ազգի հարազատ զավակ, տեսիլք ունեցող, իմաստուն և առատաձեռն անձնավորություն մը, ցկյանս նախագահ հրոչակված Ալեք Մանուկյանը, որ իր անհամար բարեգործություններով և ազգաշեն ձեռնարկներով, սփյուռքի հայության ծոցին մեջ կհանդիսանա մեր ժամանակներու մեծագույն հայը, մեր օրերու «զօրագլուխը առաքինեաց», որ իր շուրջը հավաքած նույն հոգին կրող, նույն տեսիլքներով լուսավորված մաքուր և բարի ձեռքերով մարդիկ, բարձունքե բարձունք կառաջնորդեն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը:

Սուրբ գրական Հայաստան աշխարհեն և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնեն ողջույն և օրհնություն Բարեգործականի յոթանասունհինգ տարիներու ազգանվեր մեծ վաստակին:

Ողջույն և օրհնություն մեծագործ նախագահ Ալեք Մանուկյանին, իր նվիրյալ գործակիցներուն և Միության բոլոր բարեսիրտ անդամներուն:

Թող Տերը Հ. Բ. Ը. Միության պարգևե նոր ծաղկում, նոր լույս, նոր փառք:

«Փառք, պատիւ և խաղաղութիւն ամենայնի որ գործէ զբարի» (Հռոմ. Բ 10):

Արդ՝ «Այսուհետև եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առաւել լերուք ի գործս Տեառն յամենայն ժամ. գիտասջիք զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն» (Ա Կորնթ. ԺԵ 58): Ամեն:

Սույն հանդիսության ժամանակ կատարվում է նաև գեղարվեստական ճոխ ծրագիր: Առաջինը ելույթ է ունենում Փարիզի «Սիփան-Կոմիտաս» հայկական երգչախումբը՝ ղեկավարությամբ Կարպիս Ափրիկյանի: Երգչախումբը կատարում է Կոմիտաս վարդապետի «Գեղջկական երգերի շարք», «Ցար ջան, արի», «Էսոր ուրբաթ է», Բարսեղ Կանաչյանի «Ծուշո», «Խմենք գինին» ստեղծագործությունները: Ապա «Նավասարդ» երկսեռ հայկական պարային խումբը կատարում է մի շարք հայկական պարեր:

Գեղարվեստական բաժնի վերջում ելույթ է ունենում ֆրանսահայ ճանաչված երգչուհի Լիզ Սարյանը, որը կատարում է մի շարք հայկական երգեր:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՔԱՐՈԶ ՓԱՐԻԶԻ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 10-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 10.30-ին, Փարիզի Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում ս. պատարագ է մատուցում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի Փարիզի փոխանորդ Տ. Գյուտ եպս. Նագգաշյանը:

Ս. պատարագին ներկա էին տեր և տիկին Ալեք Մանուկյանը, արտա-

սահմանից ժամանած Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղերի բազմաթիվ պատվիրակներ և խուռներամ հայ հավատացյալներ ու մտավորականության ներկայացուցիչներ:

«Հայր մեր»-ից առաջ քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ
(10 մայիսի 1981 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»: Բոլորս և աշխարհը համայն տակավին կգտնվինք շնորհներուն ներքև Քրիստոսի Սուրբ Հարության: Քրիստոսի Հարությունը մեր հավատքն է և մեր ճշմարտությունը, որու վրա հիմնված է Սուրբ Եկեղեցին, իբրև տիեզերական քրիստոնեական ամուր Եկեղեցի: Քրիստոս Իր կյանքը զոհեց խաչի վրա աշխարհի մեղքը Իր վրա առած և Իր Սբ. Հարությամբ մեծ հաղթանակը տարավ ընդդեմ մահու, ընդդեմ չարի և ընդդեմ մեղքի: Եվ Քրիստոսի Հարությունը նաև կխորհրդանշե մեզի համար այսօր, հաղթանակը ճշմարտության և արդարության, հաղթանակը մարդասիրության և խաղաղության գաղափարի: Միշտ պետք է հիշել, որ Հիսուս Իր երկրային կյանքի մեջ հանդիսացավ Իշխանը Խաղաղության և Արեգակը Արդարության: Այսպես ճանչցանք մենք, այսպես ճանչցավ համայն աշխարհը մարդկային զՀիսուս, որ մարդ էր և Աստուծո Որդի՝ միաժամանակ, որ մահվամբ մահը հաղթելով ճանապարհը բացավ հավիտենական կյանքին մեզի բոլորիս համար: Մենք մարդիկս այդ հավատքով կապրինք, այդ հույսով կմեռնինք: Եվ այդ կենարար հույսն է, որ մեզ կներշնչե երկրի վրա, այդ հույսն է, որ մեզի ոգեկան ուժ ու եռանդ կշնորհե, այդ հույսն է, որ մեզի կմղե բարին գործել այս անցավոր կյանքի ճանապարհի վրա:

Երբեմն Մեզի հարց կուտան, թե Քրիստոսի Հարությունը, որ տեղի ունեցած է մեզմե երկու հազար տարիներ առաջ, արդյոք այժմեությունն կներկայացնե՞ այսօր: Մեր կարծիքով մեր օրերուն, գուցե առավել քան ուրիշ ժամանակներուն Քրիստոսի Հարությունը կներկայացնե այժմեություն, այս փոթորկված և անարդար աշխարհի մեջ: Մարդկությունը, բոլո՛ր ազգերը, անխտիր, ծարավի են այսօր հոգևոր մեծ ճշմարտություններու, ծարավի են արդարության, մարդասիրության և խաղաղության: Մենք կհավատանք որ եթե մարդկային աշխարհը պիտի գտնե վերջ ի վերջո սիրո և խաղաղության փրկարար նավահանգիստը, այդ հնարավոր պիտի ըլլա մանավանդ լույսովը Քրիստոսի Ավետարանի:

Մեր ժողովուրդը այս հավատքով ապրած է դարեր շարունակ, նույնիսկ իր ամենաողբերգական պատմական ժամանակաշրջաններուն: Եվ այսօր կրնանք վկայել թե մեր ժողովուրդը ընտրած է ճշմարիտ ուղին: Ապացույց՝ որ հակառակ բազում անգամներ նահատակված ըլլալուն, ան այսօր վերածնունդի պատմական շրջան մը կապրի, թե ի Հայաստան և թե ի սփյուռս աշխարհի: Եվ մենք կհավատանք, թե նույն հավատքով, և նույն անմար լույսով առաջնորդվելով, մեր ազգը արժանի պիտի դառնա իր բոլոր ազնիվ և արդար իղձերու իրականացմանը: Կմնա, որ մեր ժողովրդի զավակները, շարունակեն մնալ հավատարիմ մեր նախնյաց ս. հավատքին, մեր առաքելական Մայր Եկեղեցիին և կյանքի ճանապարհին, առաքինի գործե-

բով զարդարեն իրենց կյանքը, իմաստավորեն իրենց գոյությունը այս աշխարհի վրա՝ իբրև զավակները Հայաստանյայց Եկեղեցվո:

Հավատքը Քրիստոսի Հարության և բարի գործերը, ահա փրկության ճանապարհը, որ մեզի ցույց կուտա Եկեղեցին: Առաքյալը կըսե, ինչպես գիտեք, որ եթե Հիսուս ճշմարտապես հարություն առած չէ, ընդունայն է ձեր հավատքը, ընդունայն է նաև մեր քարոզությունը: Մեկ ուրիշ տեղ «հավատք առանց գործոց՝ մեռեալ է»:

Ուրեմն մեր Եկեղեցին փրկության ճանապարհը կհիմնե այս երկու գաղափարներու վրա. հավատք և բարի գործեր, առաքինի գործեր: Մեկը մյուսով ամբողջացած, մեկը մյուսով պայմանավորված:

Հայ ժողովուրդը պատմության բեմին վրա ուղիղ ու հստակ կերպով ընտրեցած է քրիստոնեական ոգին և միշտ մղումը ունեցած է բարին գործելու, արդարանալու համար, Աստուծո դատաստանի առջև: Մեր կյանքի մեջ, բարի գործը մարմնավորող կազմակերպություն մը ծնունդ առավ 75 տարիներ առաջ Նեղոսի երկրին մեջ, ափ մը հայ քրիստոնյա մարդկանց բարի մտածումներով: Այն ժամանակ մեր ազգը տարբեր պայմաններու մեջ կգտնվեր: Հայկական Բարեգործական Միությունը ծնունդ առավ Արևմտահայաստանի ժողովրդի, գավառի ժողովրդի կյանքի մակարդակը բարձրացնելու համար. կրթական, մշակութային և նույնիսկ՝ տնտեսական տեսակետներե: Այդ ծրագիրը եթե լիությամբ գործածվեր քանի մը տասնամյակներու ընթացքին, հրաշալի արդյունքներ պիտի տար անշուշտ: Սակայն քանի մը տարի անց պալկանյան պատերազմը տեղի ունեցավ և ապա համաշխարհային մեծ պատերազմը սանձազերծվեցավ, որի ընթացքին նահատակվեցավ գրեթե ամբողջ արևմտահայությունը: Հ. Բ. Ը. Միությունը պահ մը մնաց անհայրենիք և ինք ևս պանդուխտ: Հաջորդեցին նոր ժամանակաշրջաններ: Հայ ազգի համար նոր պայմաններ ստեղծվեցան, նոր հեռանկարներ բացվեցան առաջին համաշխարհային պատերազմեն հետո: Ողբերգություններու և փոթորկումներու երկունքով և Սարդարապատի հաղթանակով ծագեց նոր արև, ծնունդ առավ հայկական նոր պետությունը, այսօրվա Հայաստանը ամենայն հայոց: Իսկ ցեղասպանութենեն փրկված հայ բեկորները ցրվեցան ի սփյուռս աշխարհի: Հայկական Բարեգործական Միությունը, այդ տարիներուն, սքանչելի հայանպաստ փրկարար գործ կատարեց, ոչ միայն արտասահմանի մեջ, այլև Հայաստանի, տարիներ շարունակ:

Ապա ժամանակները փոխվեցան և նոր կացություններ ստեղծվեցան, սակայն Բարեգործականը այսօր կգտնվի միշտ իր առաքելության ճանապարհի վրա: Այս հայկական մեծ Միությունը հավատարիմ մնաց իր առաքելության և ամեն պայմաններու մեջ, միշտ ծառայեց հայ ժողովրդին և Հայ Եկեղեցիին՝ տևապես նվիրվելով հայապահպանման գործին և հատկապես կրթական գործին: Հայ ժողովրդի սպասումն է, որ Հ. Բ. Ը. Միությունը իր պատասխանատվության բաժինը ստանձնե ի խնդիր սփյուռքի հայոց նոր սերունդներու հայեցի դաստիարակության, հետզհետե առավել լայն չափերով:

Ահա Իմ պատգամը, այսօր՝ ուղղված Հ. Բ. Ը. Միության ղեկավարության, յոթանասունհինգ տարիներու գործունեության սեմին: Ես ուրախ եմ, որ այս առիթով բազմաթիվ երկիրներե Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղերու ղեկավարներ Փարիզ են հավաքված: Բոլորին կփափագիմ ուղղել Իմ սիրո ողջույնը, Իմ գնահատանքը և օրհնությունը: Մեր գնահատանքը և օրհնությունը ի մասնավորի նախագահ մեծարգո տիար Ալեք Մանուկյանին և իր

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱՑՈՒՄ. ՓԱՐԻԶ

տիկնոջը ու Կենտրոնական Վարչության հարգարժան անդամներուն, մաղթելով անոնց գործելու անսպառ եռանդ և անսասան հավատք մեր ազգի ներկայի և ապագայի նկատմամբ:

«Շնորհք և սեր և խաղաղութիւն եղիցին ընդ ձեզ և ընդ ամենայն». Ամեն:

Հավարտ ս. պատարագի Նորին Սրբության նախագահությամբ կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ի հիշատակ Հ. Բ. Ը. Միության հանգուցյալ հիմնադիրների և նախագահների:

*
* *

Նույն օրը, ժամը 14-ին, Հայ Բարեգործական Ընդհանուր Միության Ֆրանսիայի մասնաճյուղի նախագահ տիար Նապոլեոն Պուլլուքյանը կազմակերպում է ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Ճաշկերույթին ներկա են լինում տիարք Ալեք Մանուկյանը՝ իր հարգելի տիկնոջ հետ, և Միության տարբեր երկրների մասնաճյուղերի նախագահներն ու այլ հրավիրյալներ:

Ընդունելության ժամանակ Հայոց Հայրապետի շնորհաբեր ներկայությունը ողջունում է տիար Նապոլեոն Պուլլուքյանը և բաժակ առաջարկում Նորին Սրբության առողջության և երջանիկ հովվապետության համար:

Վերջում բոլոր ներկաներին օրհնության Իր պատգամն է տալիս Վեհափառ Հայրապետը:

ՓԱՐԻԶԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԲԱՑՈՒՄԸ

Մայիսի 12-ին, երեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Փարիզի «Էնստիտի կաթոլիկ» հայագիտական ամբիոնին առընթեր «Նուրհան Ֆրենկյան» անվան հայկական գրադարանի բացումը:

Հանդիսությանը ներկա էին հայ և օտար բազմաթիվ մտավորականներ, ինստիտուտի դասախոսներ և մշակույթի, արվեստի ներկայացուցիչներ:

Հանդիսության ժամանակ ելույթ են ունենում հայագիտական գրադարանի նվիրատու Նուրքան Ֆրենկյանը, ինստիտուտի տնօրեն Փոլ Փուփար արքեպիսկոպոսը և ֆրանսիացի հայագետ պրոֆ. Ժան Մահեն:

Վերջում օրհնության և շնորհավորության Իր խոսքն է ասում Հայոց Հայրապետը՝ ընդգծելով հայագիտական մեծ կարևորությունը սույն գրադարանի, որը կյանքի է կոչվում նվիրաբերությամբ տիար Նուրհան Ֆրենկյանի:

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԱԼՖՈՐՎԻԼԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 17-ին, կիրակի.—Տօն Երևման Ս. Խաչի.

Այսօր, առավոտյան ժամը 10.30-ին, Փարիզի արվարձան Ալֆորվիլի հայոց եկեղեցում ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի միաբան և հայրապետական շքախմբի անդամ, գավազանակիր Տ. Զատիկ աբղ. Ավետիքյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հարյուրավոր հայ հավատացյալներ լցրել էին եկեղեցին և շրջափակը:

Սուրբ պատարագին ներկա էր նաև Ալֆորվիլի սիրված քաղաքապետ տիար Ժոզեֆ Ֆրանչեսկին:

«Հայր մեր»-ից առաջ Ս. Խաչի խորհրդի մասին բովանդակալից քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբությունը Իր խոսքի ավարտին հրավիրում է բոլոր ներկաներին աղոթելու Հռոմի Հովհաննես-Պողոս Բ Սրբազան Պապի շուտափույթ ապաքինման համար:

Հավարտ ս. պատարագի եկեղեցուն կից սրահում Հոգաբարձությունը և Եկեղեցասեր Տիկնանց Միությունը կազմակերպում են ճոխ ճաշկերույթ՝ ի պատիվ Վեհափառ Հայրապետի:

Սեղանի շուրջ Վեհափառ Հայրապետի օրհնաբեր ներկայությունը ողջունում է Ալֆորվիլի հայոց եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ներսեհ ծ. վրդ. Բափունյանը, որից հետո, ի դիմաց եկեղեցու հոգաբարձության, հետևյալ հուզիչ ուղերձն է ընթերցում հոգաբարձության ատենադպիր Էդվարդ Պատվականյանը.

«Վեհափառ Տեր,

Այսօր ալֆորվիլահայ գաղութը անսահման ուրախությամբ կդիմավորե իր Վեհափառ Հայրապետը:

Ալֆորվիլի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցվո հոգաբարձությունն ու Սուրբ Մեսրոպ Մաշտոց դպրոցի կրթական հանձնախումբը, ինչպես նաև եկեղեցվո նորակազմ Տիկնանց Հանձնախումբը հրճվանքով կլսե Ձեր հայրապետական օրհնություններն ու հայկական հորդորները:

Կես դար առաջ մազապուրծ հայության բեկորները երբ հասան հյուրընկալ Ֆրանսայի ափերը՝ անմիջապես որոշեցին կառուցել իրենց հավատքի տունը: Այս նոր սերունդը ունի նաև իր դպրոցը: Հավատարիմ մեր պապերու սովորության կփորձենք ավելի ևս կազմակերպվիլ, վառ պահել մեր հավատքի և մշակույթի օճախները:

Ներկայիս մեր մանկապարտեզը ունի 63 աշակերտ, բաժնված երեք դասարաններու: Վերջին դասարանին մեջ կսորվին նաև ֆրանսերեն որպեսզի պատրաստվին ֆրանսական դպրոցներուն:

Նախակրթարանը՝ այսինքն միջոյա դպրոցը ունի 142 աշակերտ, որոնք բաժնված են 11 դասարաններու՝ ժամանակի և մակարդակի տարբերության համապատասխան: Ունի չորս ուսուցիչ, ուսուցչուհի: Երկու տարի առաջ երբ Ձեր շնորհաբեր ներկայությամբ և հայրապետական օրհնությամբ բացումը կատարվեցավ այս դպրոցին, ամբողջ ֆրանսահայ գաղութը նոր ուժ մը ստացավ հոգեկան, ու հույսով և հավատքով բաջալերված շարունակեց այս բարի գործը՝ օրինակ առավ Սուրբ Մաշտոցին՝ հիմնել հայկական դպրոց:

Այսօր մեր նպատակն է ավելի ևս կազմակերպել այստեղ կրթական կյանքը, հայ մանուկը ներշնչել Մեծասքանչով, հայկական հոգևոր և մշակութային արժեքներով: Դասարաններու թիվը ավելցնել, փնտրել և գտնել Ալֆորվիլը հայկական իսկական միջնակարգով մը օժտելու հնարավորությունները: Այս ուղղությամբ կարող ենք հայտնել Ձերդ Սուրբ Օծության որ ալֆորվիլահայությունն ալ՝ ինչպես հայը ընդհանրապես, զոհաբերող է, բարեսեր է, կրթասեր: Մեր պաշտոնավարության մեկ և կես տարվան ընթացքին ալֆորվիլահայը վճարեց իր բոլոր պարտքերը, և ի վիճակի է արդեն եկեղեցին ալ մեծ սրահով մը օժտելու կարողությամբ: Այս բոլորը ծրագրված են նաև ավելի ևս բարելավելու համար մեր նորակազմ երգչախումբի

աշխատանքի պայմանները և ընդլայնելու համար դպրոցի սահմանները:

Գիտենք որ մեծ դպրոց հիմնելն ու կազմակերպելը դյուրին չէ, սակայն Ձեր հայրապետական օրհնությամբ, մեր Սուրբ Էջմիածնի հավատքով, Լուսավորչի անմար կանթեղով, և մայր հայրենիքի զորությամբ, ինչպես նաև խաղաղասեր և մարդասեր Ֆրանսայի հովանավորությամբ վստահ ենք, կհավատանք որ պիտի կարողանանք փրկել ալֆորվիլահայ նոր սերունդը, զայն հայ պահելու, զայն հայ մշակույթով և հայու հավատքով ավելի ևս զորացնելու համար:

Շնորհակալություն, Վեհափառ Տեր»:

Վերջում հայրական Իր օրհնության խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով հոգևոր հովիվ Տ. Ներսեհ հայր սուրբի և եկեղեցու հոգաբարձության եկեղեցականեր, կրթաշեն ու ազգօգուտ ծառայությունը՝ մաղթելով, որ նրանք շարունակեն նույն եռանդով իրենց նպաստը բերել մեր ժողովրդի հոգևոր, կրթական նվիրական գործին:

*
* *

Մայիսի 18-ին, երկուշաբթի:

Այսօր, երեկոյան, Վեհափառ Հայրապետը Փարիզի օպերայի դահլիճում ներկա է լինում Պուչչինիի «Տուրանդոտ» ներկայացմանը:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ

Մայիսի 22-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, Հայոց Հայրապետը քաղաքավարական այցելություն է տալիս Ֆրանսիայում Սովետական Միության արտակարգ և լիազոր դեսպան պրն. Ստեֆան Չերվոնենկոյին:

Նորին Սրբության և մեծարգո պարոն դեսպանի միջև տեղի է ունենում ջերմ զրույց:

Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էր Տ. Զատիկ աբղ. Ավետիքյանը:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՓԱՐԻԶԻ «ՊԱՆՅՈ ՓԱՐԻԶԻԵՆ» ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

Մայիսի 23-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11.30-ին, Փարիզի Հ. Բ. Ը. Միության «Պանյո Փարիզիեն» գերեզմանատանը, հայ մտավորականների պանթեոնում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ի հիշատակ այնտեղ թաղված հետևյալ հայ մտավորականների.

Լևոն Փաշալյան
Էդգար Շահին
Տեովլեթ Գեորգյան
Արամ Անտոնյան
Արշակ Չոպանյան
Ստեփան Քոչարյան
Շահան Պերպերյան
Հովհաննես Ալխազյան

Ակյուլինե Պոյաճյան
Լևոն Մոզյան
Արամ Պագալյան
Օննիկ Պերպերյան
Հակոբ Տեր-Հակոբյան
Մկրտիչ Գաթրմճյան
Մաննիկ Պերպերյան
Տ. Ատտե քհն. Փալլակյան
Տ. Հմայակ վրդ. Պախթիարյան
Արամ Խանջեր
Անարոն Տատուրյան
Հրանդ Թորոսյան
Հրանդ Բալույան
Մենտոր Պունիաթյան
Գրիգոր Ճիզմեճյան
Արշամ Խոնդկարյան
Սեդրակ Քարյան
Զարեհ Մութաֆյան
Օրիորդ Արշալույս Բիրբիրյան

Հավարտ հոգեհանգստյան արարողության և ի ներկայության մտավորականության և ժողովրդի հարյուրավոր ներկայացուցիչների, Իր խոսքն է ասում Վեհափառ Հայրապետը՝ ոգեկոչելով հանգուցյալ մտավորականների հիշատակն ու վաստակը:

ՀՐԱԺԵՇՏԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 24-ին, կիրակի օրը, առավոտյան, Փարիզի հայոց Ս. Հովհաննես Մկրտիչ Մայր եկեղեցում ս. պատարագ է մատուցում Մայր Աթոռի միաբան Տ. Առաքել աբդ. Գալայջյանը:

«Հայր մեր»-ից առաջ հրաժեշտի քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՐԱԺԵՇՏԻ ՔԱՐՈԶԸ ՓԱՐԻԶԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

(24 մայիսի 1981 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»:

«Քահանայք և ժողովուրդք, հայցեմք ի քէն Տէր բարեգութ զննջեցեալսն մեր հաւատով, ընկալ զմեզ նովին յուսով»:

Քահանայք և ժողովուրդք հավաքված ենք այսօր այստեղ աղոթելու առ բարեգութն Աստված, որպեսզի քաղցրությամբ ընդունի հոգիները մեր ննջեցյալներուն, անոնք ապրեցան այս աշխարհի վրա, կատարեցին իրենց կյանքի ընթացքը և հեռացան այս ափերեն, անցնելով դեպի ափերը հավիտենության:

Զի մենք, մահկանացու մարդիկս, հավիտենական կյանքի մը հույսով կապրինք:

Սիրելի ժողովուրդ, այսօր, ինչպես լսեցիք գերաշնորհ սրբազան հոր ծանուցումեն, հոգեհանգստյան բազմաթիվ հիշատակություններ կան և պատարագի վերջավորության հատուկ պաշտոն պիտի կատարենք, աղոթելու անոնց հոգիներու խաղաղության համար:

Պիտի աղոթենք հատկապես մեր ազգի քաջարի զավակներուն համար, որոնք 1918-ին Սարդարապատի Մայիսյան մարտերուն զոհվեցան: Կենաց և փրկության կոիվ էր այդ, որուն մասնակցեցավ Հայաստանի ամբողջ բնակչությունը, մեկ մարմին, մեկ հոգի դարձած, զորականներ, գյուղացիներ, կիներ և նույնիսկ երեխաներ:

Սարդարապատը, սիրելի հավատացյալներ, մեր նորագույն պատմության հիմնաքարն է, որուն վրա բարձրացավ հայ նոր պետականությունը, մոտ հազար տարիներու ստրկության մռայլ շրջանե հետո: Եթե այդ հաղթանակը տեղի չունենար, մեր դարավոր թշնամին իր ցեղասպանության ծրագիրը պիտի ամբողջացներ նաև Արևելահայաստանին մեջ:

Պատմական իրողություն է, որ Սարդարապատով սկիզբ առավ հայոց պատմության նորագույն շրջանը, հայ նոր պետականության դարաշրջանը, որ իր շինարար հաղթական երթով, ապահովեց ավելի քան վաթսուն տարիներու ընթացքի Հայաստանի ամբողջական վերաշինությունը, մեր ժողովրդի կյանքի անվտանգությունը, խաղաղությունը և ազգային մշակույթի անընախընթաց ծաղկումը, հայ բնակչության համրանքի քառապատկումով:

Նոր Հայաստանի երկնքի տակ մեր վերջին քսան-երեսուն տարիներու ընթացքին մանավանդ, մեր Եկեղեցին ևս հոգևոր զարթոնքի և վերաշինության շրջան մը սկսավ ապրիլ, պատմական կարևոր իրագործումներով:

Արդ, մենք պիտի աղոթենք Սարդարապատի ճակատամարտի զոհվածներու հոգիներուն համար, պիտի աղոթենք նաև, որ հրաշքով փրկված մեր երկիրը, Մայր Հայաստանը ամենայն հայոց, խաղաղության ու ապահովության մեջ հարատևորեն զարգանա, աճի ու ծաղկի և քայլ առ քայլ հասնի իր բոլոր արդար երազանքներու իրականացման:

Ոգին Սարդարապատի թող կենդանի մնա ամեն տեղ, ուր հայեր կապրին, ի Հայաստան թե ի սփյուռս աշխարհի: Եվ եթե հարցնեիք Ինձի, թե այսօր ինչպես կարելի է կենդանի պահպանել Սարդարապատի ոգին, Ես պիտի պատասխանեի հետևյալը՝ առաջին՝ հետզհետե առավել զորացնել ու զարգացնել հայ արդի պետությունը, իր տնտեսությամբ, իր ճարտարարվեստով, ազգային մշակույթով: Երկրորդը՝ հետզհետե աճեցնել համրանքը հայ ազգաբնակչության, խաղաղ շինարար աշխատանքի պայմաններու տակ, եղբայր ազգություններու մեծ ընտանիքին մեջ:

Իսկ արտաահմանի հայության համար Իմ պատգամը պիտի ըլլար հետզհետե ավելի կազմակերպվածությամբ ու նպատակասլացությամբ պահպանել ամբողջությունը մեր ժողովուրդին՝ իբրև նեցուկ մայր հայրենիքին, անբաժան մասը հայ ազգության մայր զանգվածին:

Մանավանդ մեր օրերուն, երբ աշխարհը ալեկոծ վիճակի մեջ է, Մենք պետք է աղոթենք որ Հայաստանի անվտանգությունը և ապահովությունը չխանգարվին և պահպանվի խաղաղությունը մեր երկրի սահմաններու վրա: Ատված մի արասցե, որ Հայաստանի սահմաններուն վրա պատերազմի փոթորիկ մոտենա:

Այս կացության առջև, մեզմե ամեն մեկը պետք է ի մտի ունենա հատկապես երկու պատմական հրամայականներ: Նախ պետք է հստակ տեսնել

և ուղիղ հասկնալ մեր պատմական անցյալի փորձառությունը, մանավանդ վերջին հարյուր հիսուն տարիներու փորձառությունը:

Եվ երկրորդը՝ պետք է գիտակցիլ, որ ինչպես ամեն ժողովուրդի, նաև մեր ազգի ճակատագրի համար վճռական նշանակություն ունի մեր երկրի աշխարհագրական դիրքը: Բախտորոշ կարևորություն ունեցող այս պարագան երբեմն կարծեք արտասահմանի մեջ մոռացության կտրվի:

Առանց այս հրամայական ճշմարտությունները հաշվի առնելու և հիմնվելու անոնց վրա, կարելի չէ հայ հայրենիքի ներկայի և ապագայի մասին ուղիղ դատողություններ բանաձևել, կարելի չէ իրավ հայրենասիրական գործունեություն ծավալել:

Սիրելի հավատացյալներ, այսօր պարտք կզգամ քանի մը խոսքով անդրադառնալ նաև նորոգ հանգուցյալ Վիլյամ Սարոյանի հիշատակին: Ծնունդով հայազգի Վիլյամը, կնկատվի ամերիկյան ժամանակակից ամենատաղանդավոր գրողներեն մեկը, որ սիրո և պաշտամունքի առարկան է նաև մեր ժողովրդի, մանավանդ Հայաստանի մեջ:

Երեկ կարդացի «Լե մոնդ» փարիզյան թերթին մեջ սքանչելի հոդված մը, նվիրված մեր Սարոյանին: Հոդվածի հեղինակը Վիլյամ Սարոյանը կբնորոշե իբրև մեր ժամանակաշրջանի «բնության երևույթներեն» մին նմանցընելով զայն հզոր կեյզերի մը:

Ինչպես գիտեր, կեյզերներ կկոչվին բնության հրաշալի այն երևույթները Իսլանդիայի մեջ, որոնք եռացող տաք ջուրերու ժայթքումներ են երկրագնդի խոր ընդերքներեն, տասնյակ հարյուրավոր մետր բարձրությամբ: Հեղինակը Վիլյամ Սարոյանը կնկատեր մեր օրերու մարդկության հոգեկան աշխարհի ընդերքներեն ժայթքող այդպիսի երևույթ մը: Իրապես Սարոյանի գրականությունը տարերային պոռթկում է, մտածումներու և հույզերու հեղեղ, պարզ ու անկեղծ, ճշմարիտ ու համարձակ, առանց գրական պճնանքներու, բայց խորապես մարդկային, միշտ զվարթ ու լավատես, վեր ամեն տեսակ գաղափարախոսություններե:

Որպես հայ մարդ Ես կխորհիմ, թե կեյզերի նմանող Սարոյան երևույթը, հզոր ժայթքում մրն է հայ ժողովրդի ոգեկանության ընդերքներեն, որ նա իր արյան մեջ ժառանգած է իր նախնիքներեն:

Այո՛, Վիլյամ Սարոյանի ամբողջ գրականությունը, ոգին՝ մեր օրերը ալեկոծող գաղափարախոսություններեն վեր կսավառնի և կարծես բոլորին կլուսավորե իր հոգիի բարությամբ, իր մարդասիրությամբ, իր ազնվությամբ, իր անկեղծությամբ, իր միամտությամբ իսկ:

Ես հպարտ եմ, որ այդպիսի տաղանդ ծնունդ առավ մեր ազգի մարմինեն, իբրև պարգև համաշխարհային գրականության:

Երեք-չորս անգամներ առիթը ունեցած եմ տեսակցելու իր հետ, առաջին անգամը Վիեննա, ու ապա Էջմիածնի մեջ: Ինքնատիպ մարդ մրն էր լույսով և ժպիտով լեցուն, որուն հոգիին մեջ չէիր կրնար չզգալ զորավոր բարախող իր սիրտը հայկական: Կհիշեմ, անգամ մը, ակնարկելով Իմ արտասահման ճամփորդություններուն, բացականչեց՝ «Վեհապա՛ռ, ուր որ երթաս, ամեն տեղ Հայաստան պոռա»:

Այս օրերուն Ամերիկայի մեջ մեծ հայու մը մարմինը հողին հանձնվեցավ: Այս օրերուն անոր հայ հոգին երկինք մտավ հավերժ ապրելու համար:

Թող Աստված հավետ լուսավոր պահե հոգին Վիլյամ Սարոյանին և հավետ պայծառ անոր անկորնչելի գործը:

«Շնորհք, սէր և խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն»:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ «աշխարհազօրաց և զօրավարացն հայոց, որք կատարեցան ի հերոսամարտին Սարդարապատի 1918 ամի, վասն հաւատոց և հայրենեաց»:

Նույն օրը, նույն առիթով, հոգեհանգիստ է կատարվում նաև վերջերս Ֆրեզնոյում մահացած մեծանուն գրագետ Վիլյամ Սարոյանի հիշատակին:

*
* *

Նույն օրը Փարիզի արվարձան Իսի Լե Մուլինոյի հայոց Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում ս. պատարագ է մատուցում Տ. Զատիկ աբղ. Ավետիքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Սարդարապատի հերոսամարտի ազգային, հայրենասիրական նշանակության մասին, որպես մեր օրերի Նոր Ավարայր:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ Սարդարապատում զոհված հայ մարտիկների:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վեհափառ Հայրապետը մայիսի 8—25-ը Փարիզ կեցության օրերին առաջնորդարանում կամ հյուրանոցի Իր հարկաբաժնում ընդունում է այցելությունները հետևյալ անձնավորությունների և պատվիրակությունների:

ա) Հ. Բ. Ը. Միության նախագահ և Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Ալեք և Մարի Մանուկյաններ (Միացյալ Նահանգներ).

բ) Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Սարգիս և Աստղիկ Քյուրքճյաններ (Լոնդոն).

գ) Մայր Աթոռի բարերար տիար Նուրհան Ֆրեզկյան (Փարիզ).

դ) Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Զավեն և Մարի Մնտիկյաններ (Միլան).

ե) Ազգային հասարակական գործիչ տիար Մկրտիչ Շելեֆյան (Ժնև).

զ) Բուենոս Այրեսի Հ. Բ. Ը. Միության մասնաճյուղի ներկայացուցիչներ.

է) Լիոնի Եկեղեցական Վարչություն՝ Տ. Նորվան վրդ. Զաքարյանի գլխավորությամբ.

ը) Վալանսի Եկեղեցական Վարչության ատենապետ Ստեփան Մանուկյան.

թ) Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Կարպիս Զրբաշյաններ (Փարիզ) և տիկին Էլիզ Զրբաշյան (Մարսել).

ժ) Մարսելի Եկեղեցական Վարչության փոխատենապետ պրն. Արշամ Բաբայան.

ժա) Հայագետ պրոֆ. Ֆրեդերիկ Ֆեյդի՝ իր տիկնոջ հետ.

ժբ) Ազգային-հասարակական գործիչ տիար Հայկասեր Ուզունյան.

ժգ) Մայր Աթոռի բարերար Արշավիր Կլորիկյան (Փարիզ).

ժդ) Տիար Հարություն Գազազյան (Բուենոս Այրես).

ժե) Տիար Եղիա Եղիազարյան (Լոնդոն).

ժզ) Փարիզի «Ցառաջ» թերթի խմբագիր տիկին Արփիկ Միսաքյան.

ժէ) Պրոֆ. Քեյ Հոլովեյ (Փարիզ).

ժը) Դաշնակահար Բաֆֆի Պետրոսյան (Փարիզ):

*
* *

Վեհափառ Հայրապետի Փարիզում կեցության օրերին Նորին Սրբության պատվին կազմակերպվում են ճաշկերույթներ՝ հետևյալ անձնավորությունների կողմից.

ա) Մայր Աթոռի բարերարներ տեր և տիկին Գործունյաններ (Փարիզ).

բ) Փարիզի Եկեղեցական Մարմնի անդամ տիար Համազասպ Մոմջյան.

գ) Մայր Աթոռի բարերար փարիզաբնակ Ժիրայր Մանասյան.

դ) Վալանսի Եկեղեցական Վարչությունը՝ գլխավորությամբ Տ. Նարեկ քահանայի և ատենապետ Ստեփան Մանուկյանի.

ե) Մարսելի Եկեղեցական Վարչության փոխատենապետ Արշամ Բաբայան.

զ) Տեր և տիկին Նուրիան Էոքսուզյաններ (Մարսել).

ՄԵԿՆՈՒՄ ՄՈՍԿՎԱ

Մայիսի 25-ին, երկուշաբթի օրը, կեսօրից հետո, Վեհափառ Հայրապետը, ուղեկցությամբ գավազանակիր Տ. Զատիկ աբդ. Ավետիքյանի, Փարիզի «Շաղ դ'Գոլ» օդակայանից մեկնում է Մոսկվա:

Վեհափառ Հայրապետին բարի ճանապարհ մաղթելու համար այստեղ էին եկել Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը, Տ. Գյուտ եպս. Նազգաշյանը, Տ. Ներսեհ ծ. վրդ. Բապումյանը, Տ. Մյուռոն և Տ. Առաքել աբեղաները, Տ. Մեսրոպ և Տ. Ղևոնդ քահանաները ու բազմաթիվ ֆրանսահայեր:

Երեկոյան օդանավը վայրէջք է կատարում Մոսկվայի «Շերեմետևո-2» օդակայանում, որտեղ Նորին Սրբությանը դիմավորելու և բարի գալուստ մաղթելու էին եկել Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպս. Բերբերյանը, Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

Հայոց Հայրապետին բարի գալուստ մաղթելու համար օդակայան էր եկել նաև ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահի տեղակալ պրն. Պ. Մակարցևը:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅՈՑ Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Մայիսի 26-ին, երեքշաբթի օրը, երեկոյան ժամը 18-ին, Վեհափառ Հայրապետը Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցում ներկա է լինում երեկոյան ժամերգության:

Եկեղեցին լիքն էր հարյուրավոր մոսկվաբնակ հայ մտավորականության և ժողովրդի բազմությամբ:

Հավարտ ժամերգության խոսք է առնում Վեհափառ Հայրապետը և պատմում Կենտրոնական Եվրոպա և Ֆրանսիա կատարած հովվապետական Իր ուղևորության տպավորությունների մասին.

*
* *

Մայիսի 28-ին, հինգշաբթի օրը, երեկոյան ժամը 17-ին, Վեհափառ Հայրապետին «Սովետսկայա» հյուրանոցի Իր հարկաբաժնում այցելում է

Մոսկվայում ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի մշտական ներկայացուցիչ տիար Էդվարդ Հայկազյանը և ջերմ զրույց ունենում Նրա հետ:

*
* *

Մայիսի 30-ին, շաբաթ օրը, առավոտյան, Մոսկվայի հայոց Ս. Հարություն եկեղեցում ս. պատարագ է մատուցում Տ. Տիրան վրդ. Կյուրեղյանը:

«Հայր մեր»-ից առաջ ներկա խուռներամ բազմության առջև կրկին անգամ Վեհափառ Հայրապետը պատմում է Իր ուղևորության տպավորությունների մասին և քարոզի վերջում ոգեկոչում հիշատակը հայ մշակույթի երկու վաստակաշատ դեմքերի՝ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի և նորոգ հանգուցյալ գրող Վիլյամ Սարոյանի:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգիստ՝ Արամ Խաչատրյանի և Վիլյամ Սարոյանի հիշատակին:

*
* *

Հունիսի 1-ին, կիրակի օրը, առավոտյան, Հայոց Հայրապետը, մասնավոր հրավերով Ռուսաց Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի, մեկնում է Զագորսկի վանք՝ մասնակցելու Նորին Սրբության գահակալության տասնամյակին նվիրված հանդիսություններին:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը մասնակցում է աշխարհի խաղաղության պահպանմանը և զինաթափմանը նվիրված նիստին, որտեղ հանդես է գալիս խաղաղությանը նվիրված բովանդակալից խոսքով (Այս մասին «Էջմիածին» ամսագիրը հանգամանորեն կանդրադառնա իր հաջորդ համարում):

ՎԵՐԱԴԱՐՁ ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հունիսի 2-ին, երեքշաբթի օրը, կեսօրից հետո, ժամը 16-ին, Վեհափառ Հայրապետը Մոսկվայից վերադառնում է Մայր Աթոռ:

Վեհափառ Հայրապետին դիմավորելու և բարի գալուստ մաղթելու համար Երևանի «Զվարթնոց» օդակայան էին եկել Մայր Աթոռի միաբանությունը, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները, մայրավանքի պաշտոնեությունը:

Վեհափառ Հայրապետին բարի գալուստ մաղթելու համար օդակայան էին եկել նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Ռ. Պարսամյանը և տեղակալ Ս.. Հասրաթյանը:

Ողջույնի և բարիգալստյան խոսքերի փոխանակումից հետո, Նորին Սրբությունն առաջնորդվում է Ս. Էջմիածին, որտեղ «Հրաշափառ»-ով մուտք է գործում Մայր տաճար:

Տաճարում Հայոց Հայրապետին, ի դիմաց Մայր Աթոռի միաբանության և հավատացյալ հայ ժողովրդի, բարիգալստյան ջերմ խոսք է ասում Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը:

Նորին Սրբությունը շնորհակալական Իր խոսքից հետո առաջնորդվում է Վեհարան, որտեղ Մայր Աթոռի միաբանությանը և մայրավանքի պաշտոնեությանը բաշխում է հայրական Իր օրհնությունները:

Բարի գալուստ Հայոց Հայրապետին ի Մայր Աթոռ: